ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԴ 1
Սուբսիդիա տրամադրելու մասին

ք.Գյումրի «29» «հունվարի» 2026 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրենի ժ/պ՝ Ա.Մելքոնյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 21479100 (քսանմեկ միլիոն չորս հարյուր յոթանասունինը հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրով)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում արտադպրոցական չափորոշչին համապատասխան՝ համաձայն մատուցվող ծառայությունների ընդհանուր նկարագրության՝ հավելված 1-ի, միջին տարեկան 108 (հարյուր ութ) սովորողի ուսուցումը կազմակերպելու համար, ընդ որում՝ արտադպրոցական դաստիարակության գծով միջին տարեկան 16 (տասնվեց) խմբի համար:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Պատվիրատուն իրավունք ունի.

1) Վերահսկել կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

2) Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն պայմանագրի 9-րդ կետում նշված ժամկետներում:

3) Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

3. Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից ստանալու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող գումարը սույն պայմանագրի 7-րդ կետում նշված ժամկետում և կարգով:

4. Պատվիրատուն պարտավոր է Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն:

5. Կատարողը պարտավոր է սովորողների ուսուցումն իրականացնել արտադպրոցական պետական չափորոշչին և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

6. Սույն պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից աջակցության առավելագույն չափը կազմում է 21479100 (քսանմեկ միլիոն չորս հարյուր յոթանասունինը հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

7. Պատվիրատուն 6-րդ կետում նշված գումարը «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն փոխանցում է Կատարողի հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով՝ համաձայն ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի, ոչ ուշ քան տվյալ ամսվա 10-ը: Վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվին փոխանցելու միջոցով:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8. Կողմերը սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ

9. Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N 346-Ն հրամանով հաստատված հանձնման-ընդունման ակտի ձևի՝ հավելված 3-ի, մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը, իսկ 4-րդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 25-ը:

ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

10. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

12. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Համաձայնագիրը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

13. Սույն պայմանագիրը բաղկացած է 2 էջից, անբաժանելի մաս կազմող հավելված 1-ից, հավելված 2-ից և հավելված 3-ից /յուրաքանչյուրը՝ 1 էջ/, հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ.Նժդեհի փ. 16	հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ.Ամասիա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900211120010	Հ/Հ 900228000148
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05900119
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝	տնօրենի ժ/պ՝
_____ Ա.Աբրահամյան	_____ Ա.Մելքոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

«Հավելված N 1
2026 թ. «հունվարի» «29» կնքված
ԱԴ1 պայմանագրի»

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
«Ամասիայի մանկական արվեստի դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից
2026 թվականին մատուցվող ծառայությունների ընդհանուր նկարագրությունը

Արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպվում է քաղաքացիների մտավոր, հոգևոր և մշակութային ընդունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

Ուսումնական գործընթացը նպատակաուղղվում է նաև սովորողների կողմից ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացմանը, անհատի բազմակողմանի զարգացմանը, նրանց առողջության պահպանմանը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է՝ առաջնորդվելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ուսումնական հաստատությունների տիպային ուսումնական պլաններով:

Կատարողը ապահովում է երեխայի ընդհանուր զարգացումը՝ հոգևոր մշակութային հմտությունների և կարողությունների, բարեկիրթ խոսքի ու վարվելաձևի, ինքնավերահսկման պարզագույն հմտությունների, անձնական հիգիենայի և առողջ կենցաղի հիմունքների տիրապետումը:

Երաժշտական կրթությունն ավարտվում է պետական քննություններով:

Շրջանավարտներին սահմանված կարգով տրվում է հիմնական կրթության վկայական:

Ներկայացվող պահանջներն են՝

- պետական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովում,
- մասնագետ կադրերով ապահովվածություն,
- գործող չափորոշիչների շրջանակներում նյութատեխնիկական բազայի առկայություն, որն անհրաժեշտ է մասնագիտական կրթական գործունեության, արտադպրոցական դաստիարակության և այդ բնագավառի այլ խնդիրների լուծման համար:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի
ք.Գյումրի, Գ.Նժդեհի փ. 16	մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ.Ամասիա
Հ/Հ 900211120010	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 05558305	Հ/Հ 900228000148
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի	ՀՎՀՀ 05900119
գլխավոր քարտուղար՝	տնօրենի ժ/պ՝
_____ Ա.Աբրահամյան	_____ Ա.Մելքոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.